ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ

«15» 03 2019 թ.
N 1856

Հասցե ՀՀ, ք Վանաձոր, Նժդեհի 2/42
Հեռ. (+374322) 2-02-86
Էլ. փոստ vanmedicalcenter@mail.ru, կայք www.vanmc.am

«ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ՝ Է. ԹՈԹՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Փոթոյան

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի փետրվարի 08-ին կնքվել է ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/3-5 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը, կնքվել է նաև համաձայնագիր:

Համաձայն համաձայնագրի առաջին մատակարարման ժամկետ է սահմանվել 2019 թվականի մարտի 01-ը: Կենտրոնի կողմից բազմիցս ուղարկվել են պատվերներ ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/3-5 ծածկագրով պայմանագրի բոլոր չափաբաժինների համար: Մատակարարում չի կատարվել:

13.03.2019 թ. Ձեզ ուղարկել ենք գրություն, որում խնդրել ենք 1-օրյա ժամկետում մատակարարել համաձայնագրով սահմանված և բազմիցս պատվիրված համապատասխան քանակով ապրանքը, որը չի կատարվել:

Հաշվի առնելով վերոնշյալը և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետը, այն է վաճառողի կողմից պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետների էականորեն խախտումը, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի փետրվարի 08-ին կնքված ՎԲԿ-ԷԱԱՊՁԲ-19/3-5 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը:

<<ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ
ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ Վ. ՄԿՐՏՉՅԱՆ